ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2012թ. թիվ 220-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի
ԹԻՎ 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Ռ.Պողոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վաղաժամկետ դադարեցնել ««Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կառավարման խորհրդի անդամ Ռուզաննա Պողոսյանի լիազորությունները:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի օգոստոսի 28-ի թիվ 158-Ա որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածում

2	Պողոսյան Ռուզաննա	Լոռու մարզպետարան	Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետ	Անկախ

բառերը փոխարինել

2	Ղամբարյան Սեյրան	Վանաձոր համայնքի ավագանի	Ավագանու անդամ	Անկախ

բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 19
ք.Վանաձոր